Արձանագրություն N 18/24-3

"ՔԵՆԴԼ-ԳՀԱՊՁԲ-18/24" ծածկագրով ARMEPS համակարգի միջոցով իրականացվող գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ամփոփման նիստի

ք. Երևան 13 դեկտեմբերի 2018թ. Ժամը 16:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ+ԳԱ)	Վ. Դեխտյարով,
Գնահատող անդամներ (ԳԱ)՝	Ա. Վարդանյան,
Բացող անդամներ (ԲԱ)՝	Վ. Դանիելյան, Ա. Պետրոսյան,
Հանձնաժողովի քարտուղար (ՄՀմ)՝	Ա. Բաղրամյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը՝

1. ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից ստացված Եզրակացության գնահատում:
2. Երկրորդ տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի գնահատում:
3. Գնահատող հանձնաժողովի ամփոփիչ որոշման կայացում:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից ստացված Եզրակացության գնահատում

2.1 ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից ստացված տեղեկատվության համաձայն առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություններ ունի: Ուստի, հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և ՀՀ կառավարության 04.05.2017թ.N 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 44-րդ կետի պահանջները՝ տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

2.2 Երկրորդ տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկը գերազանցում է այդ գնումը կատարելու համար Պատվիրատուի Գնումների պլանով նախատեսված ֆինանսական հատկացումների չափը, ուստի տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ Գնումների մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 5, 6, 7-րդ կետերի պահանջների համաձայն:

Հիմք ընդունելով 2.1 և 2.2 կետերը գնահատող հանձնաժողովը որոշեց.

<u>Որոշում թիվ 18/24-3</u>

Գնումների մասին ՀՀ օրենքով սահմանված կարգով ՔԵՆԴԼ-ԳՀԱՊՁԲ-18/24 ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել ՉԿԱՅԱՑԱԾ և հայտարարությունը հրապարակել gnumner.am կայքում:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Վ. Դեխտյարով

Անդամներ՝ _____ Ա. Վարդանյան

_____ Վ. Դանիելյան

_____ Ա. Պետրոսյան

Հանձնաժողովի քարտուղար _____ Ա. Բաղրամյան